

ԻՆՉՊԵՍ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ

ՊԵՏՔ Է ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵՆ ՀԱՄԱԿԱՐԳ

www.src.am

ԻՆՉՊԵՍ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ՀԱՄԱԿԱՐԳ

«Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ» մուտքն օտարերկրյա քաղաքացիների համար իրականացվում է ՀՎՀՀ, օգտվողի անուն և գաղտնաբառի միջոցով: Համակարգի հասանելիությունը տրամադրվում է ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության կողմից:

ՈՐ ՏԵՍԱԿԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ Է ԳՈՐԾՈՒՄ

Համակարգում օտարերկրյա քաղաքացիների համար գործում է երկու տեսակի ստորագրություն՝ CoSign ՀԾՀ-ով և CoSign ՀԿՀՀ-ով տեսակները, որոնք տրամադրում է «Էկենգ» ՓԲԸ-ն: CoSign ՀԿՀՀ-ով տեսակի էլեկտրոնային ստորագրությունը տրամադրվում է հետևյալ դեպքերում՝

- եթե օտարերկրյա քաղաքացինի չունի ՀԾՀ,
- եթե օտարերկրյա քաղաքացին, անկախ ՀԾՀ ունենալու հանգամանքից, չի գտնվում ՀՀ-ում:

Մնացած բոլոր դեպքերում տրամադրվում է CoSign ՀԾՀ-ով տեսակի էլեկտրոնային ստորագրություն:

ԻՆՉ ԱՆԵԼ ՆԱԽՔԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

CoSign ՀԿՀՀ-ով տեսակի էլեկտրոնային ստորագրությունը ձեռք բերելու համար օտարերկրյա քաղաքացին նախքան «Էկենգ» ՓԲԸ-ին դիմելը, պետք է հաշվառվի հարկային մարմնում (ձեռք բերի ՀԿՀՀ) և ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության կողմից ստանա «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ» մուտքի թույլտվություն:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Եթե քաղաքացին ունի ՀԿՀՀ, ապա անհրաժեշտ է www.e-request.am հարթակի միջոցով ՊԵԿ ուղարկել դիմում՝ կցելով անձը հաստատող փաստաթուղթը, որից հետո իր էլ. հասցեին կուղարկվի համակարգի հասանելիության հղում, ապա պետք է գրանցվել՝ ընտրելով օգտվողի անունը և գաղտնաբառը:

Եթե օտարերկրյա քաղաքացին չունի ՀԾՀ կամ չի գտնվում ՀՀ-ում, ապա հասանելիություն ստանալու համար դիմումի մեջ պետք է կատարի նաև նշում՝ Cosign ՀԿՀՀ-ով ստորագրության տեսակի տրամադրման անհրաժեշտության վերաբերյալ: Համակարգի հասանելիությունը ստանալուց հետո անհրաժեշտ է ձեռք բերել Cosign տեսակի էլեկտրոնային ստորագրություն՝ դիմելով www.ekeng.am «Էկենգ» ՓԲԸ-ին:

ԻՆՉՊԵՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՀՎՀՀ

Եթե օտարերկրյա քաղաքացին չունի ՀՎՀՀ, ապա www.e-request.am-ի միջոցով անհրաժեշտ է ուղարկել ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի ՀՎՀՀ ստանալու դիմում՝ կցելով անձը հաստատող փաստաթուղթը: Մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային հասցեին կստանա ՀՎՀՀ-ն, որից հետո համակարգի հասանելիությունն ստանալու դիմումը կարող է ներկայացնել նույն հարթակի միջոցով՝ վերը նշված եղանակով:

Իսկ ՀԾՀ ունեցող օտարերկրյա քաղաքացին ՀՎՀՀ ստանալու դիմումը կարող է ներկայացնել նաև առցանց՝ Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային file-online.taxservice.am համակարգի միջոցով, որի ներկայացման համար էլեկտրոնային ստորագրությունը պարտադիր չէ: